

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԳԻՆԸ:

Յարեհան զինն է 7 տարի (կոտորի ծախսով): Օտարաբնակացի թափառողները ոչ ոքի գինն այս հասցեով. B. Եսփասո. B. Բ. Թոփաթի Արեւստանի Բազարի «Արաբ»:

Թիֆլիսում կարելի է ստորագրել խմբագրատան մէջ (սրբոհանու տուն) և Երևանի ընթերցարանում:

ՄԱՅԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆՆԵԼՈՒԹԻՒՆ:

Մասնաւոր յայտարարութիւն տպել տուող պիտի վճարէ 10 հասարակ տառի համար 1 կողմէ արծաթ: Յայտարարութիւնները տպւում են չափերէն, ռուսերէն, արաբերէն, օսմանիարէն, գերմաներէն և Թուրքերէն:

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայոց լեզու:—Ներքին տեսութիւն: Ներսիսեան դպրոց: Նամակ Ալեքսանդրապոլից: Ներքին լուրեր: Արտաքին տեսութիւն: Նամակ Պարսկաստանից: Նամակ Բաքուից: Արտաքին լուրեր: Սոսան լուրեր: Առևտրական: Յայտարարութիւններ: Բանասիրական:

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

(Նուէր Գ. Անդրէաս Արծրունու)

I

Եթէ ասեմ մեզ, որ հայոց լեզուի հընչիւնները ներդաշնակ և քաղցր չեն,—մենք կը պատասխանենք. այդ կախած է ծաշակից: Եթէ կասեն մեզ, արդեան հայոց գրականութիւնը յետ է մնացել ժամանակակից եւրոպական գրականութիւններից,—մենք կը պատասխանենք. ճշմարիտ է: Եթէ մեզ կասեն, հին հայոց գրականութիւնը, թէ և հարուստ է բայց մեծ ազդեցութիւն չէ ունեցել մարդկութեան մտքի զարգացման ընթացքի վերա, որովհետեւ միակողմանի ուղղութիւն է ունեցել, բաղկացած լինելով մեծ մասամբ աստուածաբանական և պատմական գրվածքներից,—մենք կը պատասխանենք. այդ շատ հասկանալի է, որովհետեւ հայոց գրականութեան ծաղկման ժամանակը տեւել է 5-որդ դարից մինչև 14-որդ դարի վերջը, երբ դեռ ևս չը կային ոչ բնական, ոչ ճիշդ գիտութիւնները: Երեք դար, այսինքն 15-որդը, 16-որդը և 17-որդը ոչինչ նշանաւոր չեն ներկայացնում մեզ, և կարելի է ասել, որ երեք հարիւր տարվայ այդ ժամանակամիջոցը հայոց մտքի կատարեալ անկման ժամանակ կարող է համարվել:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մեր զգայարանները գրգռուում են դուրս եղած առարկաներէն և այդ գրգռութիւնը հարգութեամբ ուղարկում են մեզ, որի հետ նորա միացած են: Այդպիսով ստանում ենք մենք որ և իցէ զգացմունք և մենք մեր գլխումը կազմում ենք զաղափար այն առարկայի վերայ, որ պատճառ եղաւ մեր զգայարանաց գրգռմանը: Օրինակի համար, մեր աչքը գրգռուում է մի առարկայէ և մենք զգում ենք լոյս, իսկ այդ պատճառեցող առարկայի վերայ կազմում ենք մեր գլխումը մի զաղափար, այդ է ճրագ, Ամեն անգամ երբ մեր զգայարանները գրգռուած գրգռութեան մէջն են, մենք միշտ երևակայում ենք արտաքին առարկաներ իբրև պատճառ. բայց շատ անգամ մեր զգայարանները այդ գրգռութեան մէջն են լինում և մենք զգում ենք լոյս, ձայն և այլն ասանց այդ զգացմունքների պատճառեցող մեզմէ դուրս եղած առարկաների: Որովհետեւ մենք միշտ պատրաստ ենք մի դրախ առարկայ երևակայել իբրև պատճառ. մեր զգայարանաց գրգռման, մենք շատ հեշտ խափում ենք. երբ մենք մեր մէջը զգացած (subjectiv) մտաւոր պատկերները մէզմէ դուրս ենք բերում և մեզ ներկայացնում ենք ինչպէս ճշմարիտ (objectiv) իրողութիւնների, դրան անուանում են—հայլուցինասիւններ: Ուրեմն հայլուցինասիւնն է, երբ շատ ըմպելէն գոժաւոր իրեն մօտ զգուցելի ճիճուներ, միներ, օձեր և այլն է

II

Տասն և ութերորդ դարի սկզբում, ապրիլ ամսին 1715 թուին, մի փոքրիկ նաւակ, բաժանվելով մի մեծ նաւից, որի վերա երեքվում էր Ս. Մարկոսի դրօշակը, թիակալելով մօտենում էր Վ. Ե. Ե. Ե. ի ախալական քաղաքի ափին: Տասներկու պանդուխտ հայ արեղաներ այն օրը ուր էին գնում Խոտալայի հիւրասէր հողի վերա: Սկսեցին բերից 8-ին 1717 թուին, այսինքն երկու տարից յետոյ, Վ. Ե. Ե. Ե. խոտալական Ծեռակոյտը ընծայում էր. որպէս յաւիտեական սեփականութիւն, Մխիթարին և նորա ընկերներին քաղաքից ոչ հեռու գտնվող մի կղզի, որովհետեւ օրէնքներով արգելված էր նոր կրօնական միաբանութիւններին քաղաքի մէջ գետնովելու:...

Այդ փոքրիկ կղզին 18-որդ դարից սկսած, դառնում է հայոց մտքի համար միակ ապաստան: Ամեն կողմից հալածված, ոչ թէ միայն ինքն հայը, բայց և նորա ոգին, նորա պանդուխտ, թափառական միտքը,—վաղուց կը ողնջանար, կանհետանար աշխարհի երեսից, եթէ նա չուներ մի հարուստ անցեալ, տասն անգամ հարիւր տարվայ անցեալը:...

Հեշտ չէ ողնջանալ մի ազգութեան կամ մի լեզուի, որ ունի արդէն իր հարուստ գրականութիւնը:...

III

Հինգերորդ դարից սկսած մինչև տասնչորրորդի վերջը հայոց գրականութիւնը ծաղկման մէջ էր գտնվում, պարունակելով իր մէջ այն ժամանակին ամեն ծանօթ հմտութիւնները: Մխիթարեանները տանութեանը դարից սկսած աշխատում են լցուցանել այն,

տեսնում, չը նայելով որ իրապէս նորա մօտ ոչինչ չը կայ:

Հայլուցինասիւնները ձևանում են մարդու ամեն զգայարանաց մէջ, Հիւանդը ոչինչ չէ իրեն ներկայացնում, նա չէ կարծում, որ տեսնում է կամ լսում, այլ նա ճշմարիտ զգում, տեսնում, լսում, հոտառում է: Ոչինչ խելացի հիմունքներով կարելի չէ հիւանդի մտքի դէմ կռուել: Դժոխք բան է, որ երկուստեք Ստապը, որն որ Նապոլէոն Ա-ը Եղեթերունումը սպանել էր ուղում, պնդում էր, որ Գերմանիայի ոգին տեսել է, որ իրեն առաջարկել է Գերմանիան ազատել:

Հայլուցինասիւնները ձևանում են ոչ թէ հոգւով հիւանդներու մօտ միայն, այլ ևս հոգւով բոլորովին առողջներու մօտ:

Նիկոլայի բերից ծանօթ գրաւաճառը երկու ամիս հարեւարում թէ կենդանի և թէ մեռած անձանց պատկերները էր տեսնում, որոնք իրեն առջև մանէին գալիս, թէ իրեն և թէ միմեանց հետ խօսում էին, բայց Նիկոլայի հոգին բոլորովին առողջ էր: Թատսոն Մանսօի ներկայութեամբ երկար ժամանակ իւր պահպանել հոգու հետ խօսում էր, և տեսնում էր Աստուածածնի պատկերը երկխառն ձեռքի սքանչելի ճառագայթներով պատած, որն որ իրեն միտքարում է: Վալտեր Սկոտը տեսնում էր իւր բարեկամ բանաստեղծ Բայրոնը սենեակի մի վարդադրի մէջ, Սյրիքս երկելի ֆիլոսոֆը չէր կարողանում զինքը մի Բրադիլաքսոյ սև ու ազնի պատկերէ աղատել: Վալտեր Ելմանը տեսնում էր իւր հոգին իբրև ճրագ մի մարդու երեսով և այլն: Նիկոլայի գիտում էր իւր Հայլուցինասիւնների

որ պակաս է մեր գրականութեանը, որ մի կողմից երեք դար անշարժ մնալով, միւս կողմից ժամանակակից գիտական նոր ճիւղերից յետ էր մնացած: Նորա հարստացրին մեր գրականութիւնը անթիւ թարգմանութիւններով, զիտութեան ամեն ճիւղերից առնված, բազմաթիւ ուսումնարանական դասագրքեր ընծայեցին մեզ, հեշտացրին մեզ հին գրաւոր լեզուի և հին գրականութեան ուսումնասիրութիւնը, հրատարակելով մատենագիրների ձեռագրերը, մշակելով գրաւոր լեզուի քերականութիւնը: Նորա եղանակով մեր լեզուի ու գրականութեան ուսումնասիրութեամբ և քանի գնում է, հայոց լեզուի ուսումնասիրների թիւը Եւրոպայի մէջ օրից օր աճում է: Եւրոպայի երեւելի գիտնականները խօստովանում են, թէ հայոց լեզուի ու պատմութեան ուսումնասիրութիւնը պատճառ եղաւ պատմական բազմաթիւ իրողութիւնների պարզելուն, թէ ինքն հայոց լեզուն, ինչպէս օրինակ վիպութեան Լաւրոս, Գիւլօրի է և այլն, իր կազմակերպութեամբ պակաս չէ լատիներէնից և յունարէնից, իսկ ժամանակակից գերմանական երեւելի հայագէտներից մինը ասում է, որ հայոց լեզուն իր ընդունակութեամբ նոր ասացվածներ և բարդ բառեր կազմելու, իր հարստութեամբ պակաս չէ գերմաներէնից:...

IV

Մինչև որ կաթոլիկ հայ արեղաները, Յանսօնից Անդրեայից ու Գերմանացից յափշտակութեամբ պարապում էին մեր լեզուի ուսումնասիրութեամբ, հայ ընտանիքը ինչ էր անում: Հայ ընտանիքը, որ միշտ իր

բուն պատճառները և նոցա ինքնուրոյն (subjectiv) գոյանալը, բայց նա չէր կարողանում զինքը դուրս ազատել, իսկ շատերը իրենց Հայլուցինասիւնները ըմբռնում են ինչպէս ճշմարիտ երևոյթներ այն բանի, ինչ որ իրենք տեսնում են:

Այս Հայլուցինասիւններով կարելի է մեկնել այն բազմաթիւ երևոյթները, որոնց մեզմէ չատեր էր ենթարկուած են: Երևոյթներ, որոնք մեր կենաց մէջ շատ յաճախ են պատահում և պատճառ են լինում շատ տխուր հետեանքների: Ինչպէս որ պնդում են շատերը, թէ հրեշտակ իրենց մօտ է եկել, այս է ասել, կամ ստատանա իրենց մօտ այս ինչ պայմանն է դրել, ես ինչ գիտեմ որ ինչ շատ բաներ, այս նոյն իսկ հասկացող մարդից պատմում են իբրև ճշմարտութիւն շատ երևոյթներ:

Անգլիացի բժիշկ դոկտոր Վինչլով իւր քանի մի տարի առաջ հրատարակած գրքի մէջ—ուղեղի հիւանդութիւնները և հոգւոյ խանգարումները—շատ հետաքրքիր օրինակներ է բերում, որոնցմէ մի քանիսն ինքն ինքն պատմում են իրենցով: պատմում ենք: Վանդիմէնու. երկիրը քարոտածներէն մէկը իւր վերակազմի հետ կռուելով սպանում է նրան: Այն քիչ հագուստով որ նա հալկն ունէր և մի թվաւորով փախչում է անտառի մէջ: Ամառը ապրում էր նա ինչպէս վայրենի միջանակ և մի անգամ մօտենում էր նա առանձնացած խրճիթներին, ուրտեղ նա, զինաւորուած, հրամայական հղանակով, ուտելիք էր պահանջում: Բայց վերջապէս նորա հոգին ճնշուեցաւ միջանակութեան և նիւթաւ կան պակասութիւնների տակ և մի զարհուրելի

սատիկ բարոյականութեամբ է պարծենում, ատելութեամբ հալածում էր իր միջեց մայր և նրա լեզու: Ամեն հասարակութեան մէջ միջին և բարձր դասերի ուղղութիւնը և ոգին տիրապետում է փոքր առ փոքր և ամբողջ վերա: Բաղաւորապէս մենք չը հեռեցնենք անպայման զգացմունքին կուրօքն հնազանդել ծնողներին: Եթէ մենք հնազանդէինք մեր ծնողներին, մեր լեզու կորած կը լինէր, մենք կատէինք մեր մայրենի լեզու, ինչպէս որ ասում են նորան մեր քոյրերը, որք փակված կեանք վարելով բոլորովին ենթարկվեցան ծնողների բռնաւորութեանը: և այժմ, ինչպէս նրանց մօտ կը տիրէր մեր բոլոր հասարակութեան մէջ կատաղած ատելութիւն դէպի մայրենի լեզու և նորա ժամանակակից անդադար մշակութիւնը:

V

Չը մոռանանք որ մեր պատանները մեր վերաբերութեամբ պատրաստ են նոյնը անել, ինչ որ արել են մեր նախնիները ամեն երկիրներում փոքր ի շատ վերանորոգութիւն մտնող անձերի հետ: Հրեաները չարաբեցին, խաչեցին Քրիստոսին, հայերը կոտոր կոտոր արին Մովսէս խորենացու ոսկորները, ու ջուրը գցեցին, իտալացիք բանդարկեցին Գալիլէին: Առաջին բողոքական Հուսթայրվեցաւ, Ժան-Դարկ աղջկը, որ փրկեց ամբողջ Ֆրանսիան, որպէս կախարդ այրվեցաւ: Ֆրանսիան գլխաւոր իր բոլոր երեւելի մարդիկներին յեղափոխութեան ժամանակ... և այլն:

Մեր պատանները պարծենում են այժմ Մովսէս խորենացու գովածներով, բայց չեն մոռանում, որ եթէ նա նրանց ժամանակակից

Հայլուցինասիւն հալածում էր նրան, նա անդադար տեսնում էր իրմէ սպանուածի ուրուականը, ինչպէս չնրէ նեղացած մի կենդանի տեսնում էին նրան մի ծառ դէպի միւսը, մի տնէ դէպի միւսը անդադար փախչելիս, իւր սարսափելի նեղացմունքը զինքը թագցնելու համար: Վերջապէս նա ինքը եկաւ կառավարութեան մօտ խնդրեց, որ իրեն սպանեն, որովհետեւ նա այդպիսի կեանք աւելի կրել կարող չէր, որոյ մէջ մի վայրկեան հանգստութիւն չուներ:

Դոկտոր Գրեգորի մօտ եկաւ մի բարձր աստիճանաւոր և նրանք խորհուրդ էր ուղում հարցնել, ինչ սովորաբար երկիւղեան ժամը 5-ին, պատմում էր նա դոկտորին, ճաշ եմ ուտում և ճիւղ այդ ժամանակին մի անձն մօտս է գալիս և նեղացնում է ինձ, չը նայելով որ ես այնպէս թողելի շատ անգամ սենեակիս դուռը կողպելու: Ժամը 5-ին բազմում են սենեակիս դռները և մտնում են ներս մի պառաւ վիտի, որի երեսը ճրքած և քրտած է, դա խիստ զայրացած յարձակում է ինձ վերայ և առանց խօսք ասելու խփում է ինձ իւր ձեռնի ունեցած գաւազանով: Ես ուշաթափ աթոռէն վար եմ ընդնում և երկայն կամ կարճ ժամանակ է տեսում, մինչև ես կրկին ուշքի եմ գալիս: Այս երևոյթը կրկնվում է ամեն օր: Դոկտոր Գրեգորի հարցնում է հիւանդին, թէ այդ ժամանակը նա երբէք մի ուրիշ անձն իրեն մօտ չի կանչել: Հիւանդը այդ հարցը բացատրում է, թէ նա ամաչել է այդ ուրիշին ասելու, նա վախեցել է, իրեն վերայ ծաղր կանեն կամ իրան գծի տեղ կը դնեն: Եւ խնդրում եմ, որ այսօր միտանդ—խնդրեմ

գաղանկներու ձեռքը մասնաւորապէս կը տեսնեն, ի զուրկազայէ կաղաղակէ թշուառը և յուսակաւոր ու անողայ քիճակի մը մէջ վերոյնշեալ վայրենեաց զաղանկաւոր կրկն զոհ կերթայ, և վրան զըտ-նուած ոսկեղէններն կողոպտեալ անկողնու և այլ-լանդակ կերպարանք գրեթէ կիսամէրկ իր տունը կը խրկուի:

Կնոջ այլը իրիկուան տուն դառնալով եղածը կիմանայ, ուշաթափ կըլլայ և բողբոջու համար քաղաք իջնել պատրաստուած ատեն, զիւլին տա-ճիկները, «ամօթ է, բան մը նէ եղեր է, մենք պէտք եղած պատիժը կուտամք անոր և այլն» լա-րելով կը միջամտեն, և այն զիւլի «պէնդէն» չա-կող տաճիկը ոճրագործին քով երթալով կնոջ վրայէն կողոպտուած ինչքերը կառնէ և խաչա-տուրին կը դարձունէ. բայց նա ալ չընդունի: Ոճրագործը կասկածելով խաչատուրի վրայ, ինքն անկէ առաջ քաղաք իջնելով կառավարութեան կը բողբոջէ լաւելով թէ «իմ կինս խաչատուրին սենեակէն դուրս ելաւ և թէ խաչատուրը կինս բռնաբարած է և այլն»:

Գայմագանն ալ առանց հարցախորժի խաչա-տուրը բերելով ոչ միայն կը բանտարկէ, այլ եր-կաթի ալ կը դարձնէ:

Առաջնորդարանէն լուսելով առաջնորդն ան-ձամբ կառավարութեան կը դիմէ. և ինչ իրաւամբ զրկեալը բանտարկելով ոճրագործն ազատ թո-ղուը կը հարցունէ: Գայմագանն անմիջապէս տաճիկին այն տեսակ արգելաւ տալը իմացնելով խաչատուրը կազմեցէն կարծակի և տաճիկները խաչատուրէ մարդ զրկելով կինը սայլի մը վրայ դրած քաղաք կը բերեն, քննութեան զացող մար-դիկ ոճրագործաց ըրածը յայտնապէս կը խոստո-վանին, «պէնդէն» չափող տաճիկը կանչուելով կնոջ ոսկեղէն զարդերն ինչ պատճառաւ իւր քովը դանուրը կը հարցուն. նա ալ կը պատասխանէ թէ ոճրագործ տաճիկը ինձմէ խնդրեց որ ինչդ-րոյն առաջն առնեմ, ուստի ես ալ ոսկիները ուղեցի որ խաչատուրին յանձնելով զարդեմ կա-ռավարութեան չը դիմելու, բայց խաչատուրը չըն-դունելուն համար քովս մնաց և այլն:

Ասանկ յայտնի և ստուգուած խնդրոյ մը մէջ կան տակաւին կառավարութեան անդամներէն ոմանը, որոնք ոճրագործը պաշտպանելով կուզեն խաչատուրը յանցաւոր ձգել, գուցէ թէ յաջողին ալ, վասն զի Բաբերդու մէջ շատ տեսնուած է իրաւունքները զոհուելէ զատ անմեղներու ալ տան-ջուրը:

Երբ տարուան մէջ երկու մարդ ըսպանուելը աշխարհ լսեց. ստացուածոց միշտ վտանգի մէջ լինելը բոլոր Բաբերդցիք իրենց կրած զրկանքնե-րովը կրնան վկայել. իսկ պատուոյ ապահովու-թիւնն ալ վերոյնշեալ դէպքէն և քանի մը շա-բաթ առաջ դեռահաս յոյն պատանեկի մը զլիսուն եկածէն և յաճախ պատահած առեւանգութիւն-ներէն յայտնի է:

Մեր Օգոստոսիս կայսեր միակ կամը, կենաց ընչից և պատուոյ ապահովութեան համար ըրած ամենօրեայ պատուէրները Բաբերդու տաճիկաց աղբիցուներէն չեն ըրած, ալ կառավարութիւն կը մնայ ճշդութեան օրինաց և կանոնաց անստոտ գտնուողներուն համար պէտք եղածը անօրինել:

Կը լսենք որ Երզնկայու և Քէմալու սահման-ներուն մէջ համաբաւար Գիւրտ Աղիզ աղան երկը օր առաջ Քէմալու Գառնի գիւղին մէջ սպան-նուեր է:

1872 հոկտ. 2 ***

(Մասին)

ԱՐՏԱԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Մասին» լրագիրը հետեւեալն է հաղորդում. «Շահին աղջկան հարսանեաց Տոնախմբութիւնն սկսաւ. Նորին Վեհափառ տիկնանց համարնոր պատուանշան մի սահմանեց Արեւու կարգ ա-նունով և ամենէն առաջ մայր թաղուհոյն տաւ: —Նոյն լրագիրը թէհրանէն հաղորդում է նո-րեմբ. 2-էն, Արքայական հրովարտակ մի կը հրա-մայէ հինգ բանակետը կազմել զլիսաւոր դաւառաց մէջ: Այս անօրէնութեան պատճառն է Շահին մօտ ժամանակէն Եւրոպա ուղեորութիւնը:

—Կ. Պօլսի «La Turquie» լրագիրը հաղոր-դում է որ ել ու մտից պաշտօնայն Տատեան Թարուրիէն էֆենտին, նշանակվեցաւ վերատեսուչ հանքաց և անտառաց:

—Կ. Պօլսի անգլիական «Levant Herald» լրագիրը 5-որդ նոյեմբերի համարի պատճառով, որտեղ լրագիրը ծաղրում էր տէրութիւնը Կ. Պօլսի մէջ ջրի պահապանութեան պատճառով, —արգել-վեցաւ երկու ամսով:

—«Kölnische Zeitung» լրագիրը ասում է, որ հոկտ. 27-ին Շվեյցարիայում եղան ընտրու-թիւններ Ազգային խորհրդի համար: Որքան յայտնի են ընտրութեան հետեւեղները, բաղմունքները սահ-մանադրութեան վերաբերման կողմէն և կուտա-կիցներին կողմէն է, մինչև անգամ իւրա կանտոնի մէջ, որտեղ կըրականները մեծ ոյժ ունեն:

—«Kölnische Zeitung» լրագիրը հաղորդում է Կ. Պօլսից, որ Միտանթ-փաշայի հրաժարումն և Ռուշդի-փաշայի նշանակութիւն անաջող տպաւո-րութիւն ունեցաւ հասարակական կարծիքի վրայ: Հասարակութեան մէջ խոստում են, թէ երբ պետք է լինի որ վերջ դրվի Մուլթանի կամայականութեանը մի որ և է սահմանադրութեան միջոցով և ար-գելիի հարէ մի աղբիցութեանը քաղաքական զորքերի մէջ:

—«Monitore delle Strade ferrate» լրագիրը հաղորդում է, որ դիտաւորութիւնը Ֆրանսիայի Ի-տալիայի և Անդլիայի մէջ երկաթուղու միջադ-գային գնացք կարգաւորելու, աշուղիւր վերա է:

—«Indépendance Belge» լրագիրը ասում է որ մարշալ Բադէնի արցեսի մէջ հարցերիցն ար-դէն 28 վկաներին կարծում են որ դատաստա-նական քննութիւնը դեռ ևս քանի մի ամիս կը տևի:

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Էջմիածնի Արարատ ամառակիր հաղորդում է. «Իստ խնդրանայ Պարսկաստանի և Հնդկաստանի Հայոց վիճակաւոր Առաջնորդ Գրիգորի Ս. Եպիսկոպոսի Պարսից Օգոստ. Շահն բարեհաճել է հրամայել Թէհրանայ Հայոց դպրոցին մշտնջի-նաւորապէս տարեկան 200 թուման նուիրել ար-քունի դանձէն, ևս Համատանարանակ մերադնեայց ներկայ տարւոյ տուրքէն 150 թուման չնորհել»:

Լեհաստանի մէջ 1871 թուին հրեաների թիւը համուծ էր մինչև 814,923, Վարշավա քաղաքում միայն նոցա թիւը համուծ էր մինչև 86,685 հոգի:

—«Kölnische Zeitung» ասում է որ այն լուրը իբր թէ ռուս Մոսկով. Եթով. լրագրի խմբագիր պ. Կատ-կովը խնդագրվել է, —անհիմն է:

Մեզ հաղորդում են Լէյպցիգից (Գերմա-նիայից). «Փարիզ գնացողներուն զուցէ աւելորդ չի լինի գիտնալ, որ հայ քահանայ արժանապա-տիւ հայր Յովնանէն Հիւնքերքեհեղիսեանը այժմ բնակվում է (rue de l'observatoire 10), ուր որ կայ և հայոց մատուռ: Նմանապէս Փարիզում բնակվում է գերապատ. հայր Սարգիս վարդ. Թէո-դորեանը (rue de Galilée, 74): Գեր, Սարգիս վարդապետից վերջին հրատարակված «Մուրա-տեան վարժարանի պատմութիւն» գիրքը (3 հա-տոր) իր մէջ պարունակված հետաքրքիր նիւթերի պատճառով, ցանկալի է որ առաւել տարածվի հայերի մէջ»:

—«Արարատ» ամառակիր հաղորդում է որ Նիդսա-բէթ, այրի տիկին Գաթիեան կանգնեցնաց առա-ւել քան զհազար ռուբլիս արժողութեամբ մի տուն ընծայեց Ղզլարի Հայոց օրիորդաց հոգևոր դպրոցին:

Գ. ան ձ ա կ ի յ գրում են մեզ. «մի երեկոյ կար-դում էի, «Մեղուր» մէջ պ. Սենէքերիմ Արծրու-նու յօդվածը «Մշակի» էդ էր պա կ ա ս յօդ-վածի դէմ. դիմացի անձներին միշտ նման, արթ-նացաւ... տեսաւ դեռ կարդում եմ...» դեռ չը պրծաւ, խօսեց նա, առաւել լաւ կը լինէր, եթէ պարոնը փոքր ինչ հեռանալ իր չըջանից և տես-նէր թէ ինչ զրկանքներ են հաստատուած հասա-րակութեան իր պաշտպանած աղօթականները...»

Նոյեմբերի 24-ին, ուրբաթ օր Թիֆլիսի մեծ թատրոնում հայ-սիրօղների խումբը կը ներկայաց-նէ «Թուղթ խաղացողի կեանքը»:

Վրաց «Գրոթէա» լրագիրը խօսելով իր վերջին համարի մէջ (№ 45) «Ղոթոց» լրագրի «Մշակի» դէմ ուղղած յօդվածի մասին, ասում է թէ անհղձ-մտաբար է ռուս լրագրի կողմից տեղական լեզու-ներին հարցը, ուրեմն մի մանկա վարժա կ ա ն հարց, դարձնել քաղաքական խնդիր...:

Ինչպէս յայտնի է, «Մշակ» լրագրի ստորագրու-թիւնը գալու 1873 թուին համար, արդէն բացուած է, —և այս անգամ, հակառակ անցեալ տարուն, առաջին բաժանորդներին մինչ աս տ ա խ ա ն ց ի մի պարոն է:

ԹԻՖԼԻՑԻ ՓՕՍՏԸ

Ռուսաստան, Արտասահման ամեն օր
ԵՐԿՈՒՇԱՐԹԻ. Գուրմայիս, Գարբանդ և Երեան-դաւառը:
ԵՐԵՎԱՆԻ. Բազու, Գանջա, Շուշի, Շամախի:
ԶՈՐԵՎԱՆԻ. Գուրմայիս, Երեան, Ախալցխա Գարբանդ:

ՀԻՆԳՇԱՐԹԻ

ՈՒՐԱՐԱԹ. Գուրմայիս, Երեան, Ախալցխա
Զաքարայ, Նուխի:
ՇԱՐԱԹ. Բազու, Գարբանդ, Գանջա:

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱ-ԳՐՈՒԹԻՒՆ

ՄՕՍԿՎԱՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Նոյեմբերի 10-ին)

Առաջին ներքին 5% փոխառութեան տոմսակ 151%
Երկրորդ 148%
5% Բանկի տոմսակ 1 շրջանի 94%
" " " 2 շրջանի 93%
" " " 3 շրջանի 93%

ԹԻՖԼԻՑԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Նոյեմբերի 22-ին)

ՈՍԿԻՆ, (պօղովմայերիս) . . . 6 ա. 15 Կ.
ՓՈՒՆԱՆԿԱԳԻՐ (բարաթ) Պօլս.
վճարելիք (լիսա Օսմանեան) . 6 ,, 22 ,,
ԲԱՄԲԱԿ Երեանու. 5 ,, —
" Ամերիկայի սերմից . 7 ,, 50 ,,
ՊՂՊԵՂԸ. 12 ,, —
ԵՐԿԱԹ. 3 ,, 50 ,,

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր

Մեր այս տարի հրատարակած «կանոնաւոր և վայելուչ գրութեան պատմութիւնը ու տեսութիւնը» գրքի 257 և 258 էջերին, մինչև այս տարիի վերջը պատրաստի լինելու «կանոնաւոր և վայելուչ գրութեան օրինակներ և վարժութիւններ» գիրքը սխալ է տպած, վասն որոյ այն յայտարարութեամբ յայտնու էնք, որ:

	Իսկական գիրք.	Սխալմբ տպած գիրք.
	60 կոպ.	50 կոպ.
Գունատ մեկնով տպած վարժութիւններ:		
№ 1, սկզբնական խաղեր կամ տառերի տարբերը, 4 ծալ, 4 երես, հարիւր օրինակը — —	2 բուրլի	1 բուր.
№ 2, այբբենը և բառեր մեծաձև, 4 ծալ, 3 թերթ, 24 երես, հարիւր օրինակը — —	12 բուրլի	6 բուր.
№ 3, զլիսաղբերը մեծ և միջին ձև, 4 ծալ, 4 երես, հարիւր օրինակը — — — —	2 բուրլի	1 բուր.
№ 4, այբբենը և բառեր միջին ձևի մեծութեան 4 ծալ, 8 երես, հարիւր օրինակը — — —	4 բուրլի	2 բուր.
№ 5, առանձին պարբերութիւններ, փոքրիկ հա- տուածներ մանր տառերով և թուանշաններ, 4 ծալ, 4 երես, հարիւրը — — — —	2 բուրլի	1 բուր.

Սոյն իսկական գները նշանակած են նոյն իսկ ամեն մի վարժութեան օրինակ-ների վերայ:

Տպագրութիւնը վերջանալուց յետոյ Մեղուի և Մշակի միջնորդութեամբ կը յայտնուի Բուսով ենք որ Դեկտեմբերի սկզբին Պետերբուրգ և Կ. Պօլս լինի, իսկ Դեկտեմբերի վերջին կամ 1873 թ. յունվարին Թիֆլիս:

Նոյն «Գրութեան» ճանապարհի ծախքը Պետերբուրգէն, Կ. Պօլսէն և Թիֆլիսէն միւս քաղաքներն առաքելը գնողներին վերայ է:

Վերոյնշեալ «Գրութեան» տպագրութիւններից միանգամից հարիւր բուրլու և աւելի գնողը ամեն մի հարիւր բուրլու վաճառի տեղ կ'առանայ, իբրեւ զեջուցին, հա-րիւր քսան և հինգ բուրլու նիւթ:

Միւս մեր տպագրութիւնների գինը մնում է անփոփոխ, ինչպէս որ վերոյնշեալ «կանոնաւոր և վայելուչ գրութեան պատմութիւնը ու տեսութիւնը» գրքի 255, 256 էջերին և 258 երեսի վերջին նշանակած է, ասել է թէ. Հայկական Քնարի, Կոմի, Լարուրի, Կանոնաւոր և վայելուչ գրութեան պատմութեան ու տեսութեանը և Հա-յերէն կանոնաւոր ու վայելուչ գրութեան տողացանցների գները մնում են անփոփոխ:

Որովհետեւ ես դիտաւորութիւն ունիմ խմբագրել մի այնպիսի Երգարան, որի մէջ բո-վանդակուէին այժմեան երգող և ժողովրդի սիրած ազգային և տեղական երգերը, վասն որոյ ահա մեծ յուսով հրաւիրում եմ Ձեզ որ նպաստէք իմ ձեռնարկութեանը, ուղար-կելով ինձ ուսել իցէ աշխատասիրած երգերից, որոնք չեն տպագրուած: Իսկ ուղարկած եր-

գերի փոխարէն, Դուք կ'վարձատրուիք նոյն իսկ տպագրուած երգարանով:
Աւագ Գրիգորեանց.
1872 թ. Անա իմ հայցն.
ВЪ БАНК.
Авакы Назареву
Грузопосы.
Спросить въ Армянскомъ училищѣ.